հայոց ՉԻ (1271) վկայութեամբ մեծ ազգի իշխանին մեր աղբարն պարոն Սմբատայ և մեծահարգի ձիաւորացն սէր Կոստանդին և սէր Ընտաղցին և սէր Գոյներին[91]։

Ինչպես հայտնի է 13-րդ դարի վերջում և 14-րդ դարում երկրի ներսում սրվեցին ունիթորների և հակաունիթորների հակամարտությունները, ընդ որում արքունիքում ուժեղացավ պայքարը իշխանության գրավման համար։ Թագավորները հաջորդում էին մեկը մյուսին հաճախ զոհ դառնալով հակառակորդների դավադրությանը։ Այդ շրջանում ուժեղանում էր ասպետների քաղաքական դերն ու նշանակությունը։ Ասպետները, որպես գահի հավակնորդների ռազմական հենարան, մասնակցում են պալատական հեղաշրջումներին։ Այսպես, «ՉՔԵ (1296) Հեթում թագավորն եւ զթագաւորութիւն յիւր զեղբօրն իւրոյ պարոն Թորոսին. ի նոյն ամի դաւ եղեւ իշխանացի Հայոց, որք էին զբլխաւորք պարոն Օշինն Սինջալն, որդի պարոն Սմբատայ Գունդստաբլին և պարոն Օշինն Բակուրեանց, որ էր սպասալար դարբասին և այլ բազում իշխանք և ձիաւորք»[92]։

Ավելի ուշ 1344 թվին Ունիթորների թեկնածու թագավոր Գվիդոն Լուսինյանի սպանությունից հետո, երբ Կոստանդին 4-րդը ընտրվում է թագավոր, նա որոշում է սպանել Գվիդոնի կնոջը և որդիներին։ Այդ բանը նա հանձնարարում է երկու ասպետներին. «եւ հրամանայ (Կոստանդին 4-րդ) ասպետաց երկուց ազատաց ջրահեղձոյց առնել զտիկինն զայն և զորդիս նորա երկոսին զաղտնաբար»[93]։

Միջնադարյան Եվրոպայի, մասնավորապես Անգլիայի օրինակով, որտեղ խաղաղության ժամանակ արքունիքում, իսկ պատերազմի ժամանակ ռազմի դաշտում սուրհանդակի պաշտոն էին կատարում հերալդները, այստեղ, Կիլիկիայում, արքունիքում նրանք կոչվել են պատգամավորներ[94], որը անգլերեն «հերալդ» բառի թարգմանությունն է։ Նրանք սենյորաների կամ բարոնությունների դղյակում կոչվել են «ավագ չավուշ» և «չավուշ»[95]։ Պատգամավոր-չավուշները կատարում էին պետական կարևոր հաղորդումներ, կարգավորում էին պալատական հանդեսներ[96] և բարոնություններում հրավիրում էին վերին ատյանի նիստեր[97]։

Մենք չկարողացանք որևէ վկայություն գտնել եվրոպական ասպետության մի շարք աստիճանների մասին, ինչպիսիք են, դրոշակակիր ասպետները և նրանց մանկլավիկները։ Սակայն մեզ թվում է, որ Վիլլերբրանդտ Օլդենբուրգցու՝ 1212 թվականի Սսում տեղի ունեցած Ջրօրհնեքի նկարագրության մեջ հիշատակված «և դասք դասք ազնվաց երկրի և բազմութիւն զօրականաց վայելչապէս զգեստաւորեալք զորոց՝ արբանեակք նոցին զցելով ի ձեռս զնշանս և զդրոշս և ածելով զերիվարս նոցին պալատականս...»[98], վկայությունը վերաբերում է դրոշակակիր ասպետներին և նրանց մանկլավիկներին։

---

91 «Բազմավէպ», 1873, էջ 119։

92 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրության, 1951, էջ 82։

93 Յովհանու Դարտելի ժամանակագրություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 54։

94 Смбат Спарапет, Судебник, стр. 70.

95 Asstses d'Antioche, Trad. L. Alishan, p. 9—10.

96 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 475։

97 Смбат Спарапет, Судебник, стр. 70.

98 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 476։